

Առաջին և առայժմ միակ հեռավար մագիստրոսական կրթական ծրագիրը Հայաստանի Հանրապետությունում

2010 թվականին ՀՀ կառավարությունը հաստատեց «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը», որից հետո հանրապետության բազմաթիվ բուհեր և կազմակերպություններ սկսեցին հեռավար կրթություն իրականացնել: Սակայն մինչ օրս դրանք սահմանափակվում են վերապատրաստման համակարգով կամ կարճատև դասընթացներով:

Հայաստանի Հանրապետությունում հեռավար ուսուցման ձևով իրականացվող առաջին և առայժմ միակ մագիստրոսական կրթական ծրագիրը «Գործարար վարչարարություն (կառավարում)» ծրագիրն է, որը 2017 թվականից համատեղ իրականացնում են ՀՀ պետական կառավարման ակադեմիան և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնը: Ծրագրի շրջանավարտներն ստանալու են երկու կրթական հաստատությունների համատեղ դիպլոմ:

Նախորդ` 2017-2018 ուսումնական տարում այս կրթական ծրագիրը 15 մագիստրանտ է ունեցել, իսկ այս տարի մագիստրանտների թիվը 19 է: Նրանց դասավանդում են հեռավար կրթություն իրականացնելու համար վերապատրաստման հատուկ դասընթացներ անցած մասնագետներ:

Հեռավար ուսուցման նպատակը և առավելությունները

Հեռավար ուսուցման նպատակը բարձրագույն մասնագիտական կրթական հաստատությունների սովորողներին հիմնական և լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրեր յուրացնելու հնարավորություն ընձեռելն է անմիջապես բնակության կամ ժամանակավոր գտնվելու վայրում: Ընդ որում, այս ձևը թույլ է տալիս սովորել և դիպլոմ ստանալ ամենահեղինակավոր բուհերում: Սա հեռավար կրթության թերևս գլխավոր առավելությունն է, սակայն միակը չէ:

Կարևոր է նաև հեռավար կրթության մատչելիության հանգամանքը. այն ավելի էժան է: Միաժամանակ, ուսուցման այս համակարգի դեպքում համացանցային տեխնոլոգիաների կիրառումը տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ և հաշմանդամություն ունեցող անձանց համար ճանապարհ է բացում դեպի բարձրագույն կրթություն, ինչը բոլոր զարգացած երկրների սոցիալական քաղաքականության գերակա ուղղություններից է:

Քանի որ հեռավար ուսուցումը հիմնականում իրականացվում է համացանցի միջոցով, այն սովորողին հնարավորություն է տալիս ինքնուրույն ընտրելու սովորելու համար ամենահարմար ժամանակը: Դա հատկապես ձեռնտու է աշխատող և երեխաներ ունեցող անձանց, որոնք ժամանակը կառավարելու խնդիր ունեն: Նրանք կարող են սովորել իրենց հարմար ռեժիմով և «սեփական արագությամբ»:

Հեռավար ուսուցման գործընթացը ներառում է նաև «կենդանի» դասեր, որոնք օգնում են սովորողներին ավելի լավ յուրացնելու դասընթացը, ապահովում են հետադարձ կապ և խթանում են ուսուցումը, սովորեցնում են ճիշտ հարցադրումներ կատարել, հնարավորություն են տալիս որոշելու սովորողի ուսուցման պահանջարկը:

Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպումը

Հեռավար ուսուցման գործընթացը կազմակերպվում է էլեկտրոնային հարթակի միջոցով: Ֆորումներ, առցանց առաջադրանքներ, վեբինարներ, իրավիճակային խնդիրներ, ինքնաստուգման թեստեր, առցանց դասախոսություններ... Այդ ամենը՝ միայն էլեկտրոնային հարթակում: Ուսանողը ուսումնական տարվա ընթացքում ընդամենը երկու անգամ է դեմառդեմ հանդիպում դասախոսին՝ կիսամյակային ամփոփիչ քննությունների ժամանակ:

Կրթության այս տեսակի դեպքում ստեղծվում է նոր կրթական տեղեկատվական միջավայր, և սովորողները հստակ գիտակցում են, թե ինչպիսի գիտելիքներ, հմտություններ և ունակություններ են իրենց անհրաժեշտ: Նրանք հնարավորություն են ունենում ինքնուրույն ստանալու անհրաժեշտ գիտելիքները, օգտվելու զարգացած տեղեկատվական ռեսուրսներից (տվյալների և գիտելիքների բազաներ, համակարգչային, այդ թվում՝ մուլտի-մեդիա, ուսուցանող և ստուգիչ համակարգեր, տեսագրություններ, ձայնագրություններ, էլեկտրոնային գրադարաններ, ինչպես նաև էլեկտրոնային դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ):

Հեռավար ուսուցմամբ սովորողների համար դասախոսներն առցանց հանդիպումներ են կազմակերպում՝ ապահովելով ուսուցման ինտերակտիվությունը: Իսկ հարցեր ունենալու դեպքում սովորողը, որպես կանոն, հնարավորություն ունի դրանք օպերատիվ կերպով քննարկելու դասախոսի հետ հեռավար ուսուցման կառավարման հարթակի գործիքների օգնությամբ:

Հեռավար ուսուցման կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ ուսուցման գործընթացի առանցքում ոչ թե դասական իմաստով դասավանդումն է, այլ ինքնուսուցումը, սովորողի ինքնուրույն գործունեությունը՝ գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու նպատակով:

Հեռավար ուսուցման առանձնահատկությունները

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հեռավար ուսուցման կենտրոնի ղեկավար **Հասմիկ Ստեփանյանի** խոսքով՝ հասարակության մի զգալի շերտի համար հեռավար ուսուցումը պարզապես այլընտրանք չունի:

«Նախ՝ հեռավար ուսուցումը նորարարություն է կրթության ոլորտում, - ասաց նա: - Մեր օրերում, երբ գրեթե բոլոր ոլորտներում տիրապետող են դառնում տեղեկատվական

տեխնոլոգիաները, կրթությունը չի կարող սահմանափակվել լոկ լսարանային ձևաչափով: Բացի այդ, միջազգային փորձն արդեն ապացուցել է հեռավար կրթության առավելությունները»:

Անցած մեկ տարվա հեռավար ուսուցման փորձը ցույց է տվել, որ այս համակարգում սովորելու պարագայում ուսանողը ոչ միայն տեղեկատվական տեխնոլոգիաներից և հեռահաղորդակցության միջոցներից օգտվելու, այլև իր ժամանակը կառավարելու հմտություն պետք է ունենա:

Ինչ վերաբերում է «Գործարար վարչարարություն» մագիստրոսական կրթական ծրագրին, ապա, ըստ Հասմիկ Ստեփանյանի, այն առավել հետաքրքրել է բիզնես ոլորտի մասին հիմնավոր գիտելիքներ ստանալու ցանկություն ունեցող անձանց, որոնք, սակայն, դասերի հաճախելու ժամանակ չունեն: Հեռավար ուսուցման կենտրոնի ղեկավարը խոստովանում է, որ անձամբ իր համար չափազանց հետաքրքիր ու հաճելի է հեռավար հարթակում ուսուցանելը: Նաև վստահեցնում է, որ հեռավար կրթական ծրագրում դասավանդում են իրենց գործում հմուտ մասնագետներ:

Խոսելով հեռավար ուսուցման առանձնահատկությունների մասին՝ «Գործարար փաստաթղթաշրջանառություն» առարկայի դասախոս **Գայանե Հովհաննիսյանն** ասում է, որ այս համակարգում դասավանդողի դերը էապես տարբերվում է դասավանդողի ավանդական դերից: Վերջինս ոչ թե տեղեկատվության աղբյուր է սովորողների խմբի համար, այլ անհատական ուսուցման ծրագրով սովորողների ինքնուսուցման ղեկավար:

«Դասավանդողի պարտականությունների մեջ մտնում է ոչ միայն հեռավար դասընթացի ստեղծումը, այլև պահպանումը այն էլեկտրոնային միջավայրի, որտեղ ուսանողներն աշխատում են,- ասաց նա:- Հեռավար ուսուցումը թույլ է տալիս շեշտը դասավանդումից տեղափոխել սովորողի ինքնուրույն ճանաչողական գործունեության վրա՝ հաշվի առնելով այն թեզը, որ մարդը կարող է մնայուն գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերել հիմնականում իր ակտիվ աշխատանքի շնորհիվ»:

Եթե դուք նախընտրում եք ժամանակակից կրթությունը

Մասնագետները պնդում են, որ ավանդական կրթությունն այսօր ճգնաժամ է ապրում ողջ աշխարհում: Ավանդական կրթության ոչ մատչելի լինելը, պահպանողականությունը, սահմանափակվածությունը, իներցիոն բնույթը խոչընդոտում են կրթության հետագա զարգացումը: Մինչդեռ ժամանակակից մարդու գիտելիքների պահանջը շարունակ աճում է, և այն բավարարելու համար անհրաժեշտ են նոր մեթոդներ՝ այսօրվա հազեցած տեղեկատվական-կրթական միջավայրում կողմնորոշվելու համար:

Եվ եթե դուք նախընտրում եք ժամանակակից կրթությունը, նշանակում է **ձեր ընտրությունը հեռավար ուսուցումն է**: Հեռավար ուսուցման շնորհիվ դուք կներգրավվեք տեղեկատվական հասարակության մեջ, ինչը նշանակում է ինտելեկտուալ հասարակություն՝ հիմնված գիտելիքների և տեղեկատվության վրա:

Հեռավար ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնք հեռավար դասընթացների նախագծման և իրագործման հիմքն են: Ուսուցման այս ձևը հեռանկարային է հատկապես անընդհատ ուսուցման իրականացման առումով:

Այսօր վստահաբար կարող ենք ասել, որ հեռավար ուսուցումը արդեն իսկ ապացուցել է իր կարևորությունն ու պահանջված լինելը: Ավելին, հեռավար ուսուցման զարգացումը ճանաչվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիմնական կրթական ծրագրերի առանցքային ուղղություն: